

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1896 ԹԻԱԿԱՆԻՆ

24-ՐԴ ՏԱՐԻ

24-ՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակի Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրօգրամով և նոյն ուղղու-
թեամբ: Մեր ստանում ենք սեփական հեռագրերն երբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ը ԲԱՅՎԱԾԷ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տաճար և
մէկ և տաճար ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսա-
կանը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՊԱՐԱԲԱՍԱՆԸ (Բաղրանայա և Բարձրագոյա փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է գրիմը հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ПОДПИСКА НА 1896 ГОДЪ
НА ГАЗЕТУ

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

Программа газеты: I. Правительственные распоряжения. II. Телеграммы собственных корреспондентов и «Российскаго телеграфнаго агентства». III. Статьи по внутренним вопросам. IV. Обзорные иностранной политической жизни. V. Мѣстная хроника: засѣданія думы, общества и желѣзно-дорожныя новости. VI. Корреспонденцій. VII. Общая хроника—внутренняя и иностранная. VIII. Фелетонъ литературный, научный, повѣсти, рассказы и др. IX. Судебная хроника. X. Смѣсь. XI. Театръ и музыка и XII. Справочный отдѣлъ.

Съ перваго января «Тифлисскій Листокъ» будетъ выходить безъ увеличенія подписной цѣны для городскихъ подписчиковъ въ форматѣ большого газетнаго листа и будетъ имѣть на каждой страницѣ шесть колонокъ (форматъ газеты «Кавказъ»).

Увеличеніе формата даетъ редакціи возможность знакомить читателей ежедневно съ текущими новостями дня и разнообразить содержаніе газеты.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Городская.	Иногородная.
Съ доставкой: на годъ 5 р. — >	Съ пересылкой: на годъ 7 р. — >
> > > полгода 3 > — >	> > > полгода 3 > 50 к.
> > > 3 мѣс. 1 > 75 к.	> > > 3 мѣс. 2 > — >
> > > мѣсяцъ — > 75 >	> > > 1 мѣс. 1 > — >

Подписка принимается исключительно въ конторѣ изданія. (Тифлисъ, Голловинскій проспектъ, д. № 3, а въ Баку въ табачномъ магазинѣ Энфиаджанца.

1—5

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԵՅԹՈՒՆ

Տեղագրական, ազգագրական և վարչական տեղեկութիւն

Մեր յօդուածի այս գլուխը նուիրում ենք
Կիւրիկիայի այն մասի նկարագրութեան, որը
յայտնի է Ձէյթլիում կամ Ուլիսիա անունով,
և որը այժմ ընդհանուր հետաքրքրութեան ա-
ռարկայ է:

Խաղաղէն Ձէյթլիումը, իբրև երկիր, առաջին
անգամ պատմութեան մէջ յիշվում է 15-րդ դա-
րից սկսած, այն եւ Ուլիսիա անունով, իսկ Ձէյ-
թլիում անունը առաջին անգամ յիշվում է յիշա-
տակագրերի և ձեռագիրների մէջ միայն 16-րդ
դարի վերջերում: Նրա պատմական անցեալի
մասին որոշ և ստույգ տեղեկութիւններ չունենք,
որովհետեւ հին պատմութեան մէջ Կիւրիկիայի
լեռնայն երկրի մասին, եթէ խօսք է լինում, յիշ-
վում է Կիւրիկիայի լեռները անունով:

Ընդհանրապէս կարծում են, որ «Ձէյթլիում»
բառը առաջ է եկել նրանից, որ Կիւրիկիայի այդ
մասում շատ ձիւթնիներ կան և երկրին եւ կոչ-
վել է «Ձէյթլիում», որ թիւրքերէն է: Բայց այդ
կարող էր տեղի ունենալ թիւրքերի տիրապե-
տութիւնից յետոյ: Հայր Ալիշան հաւանական չէ
համարում այդ բացատրութիւնը, որովհետեւ, նկա-
տում է նա, ձեռագիրների մէջ ասված է. «Ձէ-
թլիում» և ոչ «Ձէյթլիում»: Գալով երկրին, նա

կարծում է, որ իսկապէս Ձէյթլիումը, իբրև մի
ինքնուրոյն երկիր, կամ դաշնակցական
մարմին, սկսվել է կազմակերպվել Ռուբինեան
կամ Միսաքեան թագաւորութեան անկումից
յետոյ, երբ մի քանի բերդատեղեր շարունակե-
ցին իրանց իշխանութիւնը լեռնային ամուր
տեղերում: Այդ առիթով Ալիշան առաջ է բե-
րում 1473 թվին գրված մի յիշատակագիր, որի
մէջ ասված է, թէ հայոց մեծ սպարապետ Հե-
թումի կին Ջարմանուհին, Հեթումի սպա-
նութիւնից յետոյ «փախաւ Կիւրիկիայի և Ուլիսիա-
յի սարերը, և այնտեղ թափառում էր հինգ տա-
րի. հինգ տարուց յետոյ հաւաքելով լեռնական-
ներից 300 հոգի, իր որդի Գեորգի հետ առաւ
Կասան բերդը և ազատ պահեց աղբը այլադի-
ւերի ձեռքից ամբողջ 65 տարի»:

Արդեօք այդ յիշատակարանը առաջ բերելով
նրեր (Մամուլիւնները) թէպէտ շատ անգամ ար-
շաւել էին Կիւրիկիայի վրա, բայց չէին կարողա-
ցել հաստատել այնտեղ իրանց իշխանութիւնը.
վերջապէս, XIV-րդ դարի վերջում, նուաճեցին
այդ երկիրը և Հայաստանի Լուսինեանների գա-
հը կործանեցին: Յաղթականների թրից ազատ-
ված հայերը, ինչպէս և Սիւս մայրաքաղաքի առ-
ման ժամանակ Լուսինեան Լեւոն Զ. թագաւորից

վիկտոր Լանդուս, որը բաւական ուսումնա-
սիրել է Կիւրիկիայի պատմութիւնը, հաւ ինչ է
ասում Ձէյթլիումի ծագման մասին. «Ներկայումս
նրեր (Մամուլիւնները) թէպէտ շատ անգամ ար-
շաւել էին Կիւրիկիայի վրա, բայց չէին կարողա-
ցել հաստատել այնտեղ իրանց իշխանութիւնը.
վերջապէս, XIV-րդ դարի վերջում, նուաճեցին
այդ երկիրը և Հայաստանի Լուսինեանների գա-
հը կործանեցին: Յաղթականների թրից ազատ-
ված հայերը, ինչպէս և Սիւս մայրաքաղաքի առ-
ման ժամանակ Լուսինեան Լեւոն Զ. թագաւորից

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մահապարտութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԿԱՆԱՆՅ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Այս օրերս պաշտօնապէս յայտարարվեց
միւսիսների կոմիտէի Բարձրագոյն Հա-
ւանութիւն գումարը որոշումը՝ հիմնել Թիֆ-
լիսում մահապարտութեան իրական սեռի հա-
մար մի կրթական փակ հաստատութիւն,
հիմնադրելու կուրսով:

Այդ վերին աստիճանի համակրելի ու
որոշման առիթով մենք կը կամենայինք մի
քանի խօսք ասել: Ոչ մի տարր մեր երկ-
րում այնքան չէ մատնված անշարժու-
թեան, թմրութեան, որքան մուսուլման
տարրը: Մինչդեռ մեր երկրի ազգա-
բնակչութեան միւս տարրերը անդադր
ձգտում են քաղաքակրթութեան, անդադր
առաջ գնալու, անտեսապէս և մոռալա-
պէս զարգանալու, մուսուլման ազգաբնա-
կութիւնը, և այն եւ ոչ միայն նրա ստո-
րին խաւերը, այլ նոյն իսկ արտօն-
ված, բէկերի և աղաքարների դաս-
կարգը գլխից զնչ, կամ շատ քիչ հա-
կում է ցոյց տալիս դէպի կուլտուրան, դէ-
պի քաղաքակրթութեան ընդհանուր շար-
ժումը:

Մուսուլման ազգաբնակչութեան անշար-
ժութեան պատճառ եղող գորտուր փակ-
տուրներից մէկն էլ իրական սեռի առանձ-
նացած, փակ վիճակը և նրա կատարեալ
տգիտութիւնն է: Փակվելով հարեմներում,
որ և է հաղորդակցութիւն չունենալով

հեռացած ասպետները և զօրականները փախան
և ապաստանեցին Տորոս լեռան կիրճերի մէջ՝
այդտեղ մի նոր հայրենիք հաստատելու և իրանց
ազատութիւնը, կրօնը ու սովորութիւնները
պահպանելու մտքով: Թէպէտ չորս կողմից ե-
զիպտացիների, թիւրքերի և քիւրդերի պէս
անհաշտ թշնամիներ ունէին, բայց Տարոսեան
շղթայի բարձրաբերձ սարերի մէջ ապաստանած՝
և պահպանելով նրա կրթութիւնը, հայերը առանձին
համայնքներ կազմեցին, որոնք աճում էին նոր
գաղթականներով, և քաջասիրտ զօրավարների
հրամանատարութեամբ, կարողացան շատ հերո-
սական կռիւներից յետոյ յարատեւել իրանց ամ-
բողջութեան մէջ և ազատվել սարկութիւնից,
կամ, աւելի լաւն ասենք, բնաջինջ լինելուց:

«Շրջապատված լինելով թշնամիներից, որոնք
շարունակ փորձում էին իրանց պաշտպանող
ժայռերի գոտիներից վեր բարձրանալ, հայերը
ստիպվեցին պատնէշներ կանգնեցնել և արգելե-
րը շատացնել, որպէս զի թշնամիները չը կա-
րողանայն ոչ իրանց ամբողջութիւններին մօտենալ
և ոչ եւ կողոպտել Նիւրի-ք ասված վրանաբնակ
հայերի բնակիւնները, որոնք նրանց համար առա-
ջապահ գնդերի տեղ էին ծառայում և պատա-
կարծախնդրութեամբ: Նրբ, բաւական ժամանակից յե-
տոյ, այդ բոլորովին պատերազմական հայ գաղ-
թականութիւնը իրան բաւական ապահով զգաց
զօրաւոր յարձակումների դէմ, սկսեց պարապել
երկրագործութեամբ:

«Ներկի այն կտորը, որտեղ հայերը խիւղ էին
իրանց վրանները, արտակարգ պարագրութիւն
ունենալով, առատաբար արտադրում էր նրանց

արտաքին աշխարհի հետ, բոլորովին ան-
մասն լինելով ժամանակակից քաղաքակր-
թական շարժման, մուսուլման կինը ազ-
գում է նոյն ուղղութեամբ և մատաղ
սերնդի վրա և տարածում է նրա մէջ այն
սերմերը, որոնցից աճում և զարգանում
է մահապարտութեան տարրի հակակրթութիւնը
դէպի կուլտուրան և մոռալա շարժումը:

Մինիստրների կոմիտէի որոշումը նպա-
տակ ունի օգնել մահապարտութեան իրական
սեռին՝ զուրս գալու այդ ցաւալի վիճակից:
Եւ անկասկած, մի կրթական հաստատու-
թիւն, որտեղ մուսուլման աղջիկները կա-
րողանային փոքրիկ շատ և ուսում ստանալ,
ձեռք բերէին գոնէ տարրական տեղեկու-
թիւններ գիտութեան մասին, մի մեծ և
զօրաւոր խթան կը հանդիսանար՝ մղելու
մուսուլման ազգաբնակչութիւնը դէպի շար-
ժում, դէպի ընդհանուր քաղաքակրթու-
թիւն:

Սակայն այդ համակրելի ծրագրի իրա-
դրումը պայմանաւորված է այն նիւթա-
կան աշակցութեամբ, որ ցոյց կը տալ
ինքն մուսուլման ազգաբնակչութիւնը, ո-
րովհետեւ կառավարութիւնը չէ կամենում
ամբողջ ծախսը—միանուագ 50,000 և տա-
րեկան 15,000 ռուբլի—իր վրա առնել:
Այդ նպատակով Անդրկովկասի շէյխ-խ-լ-
խաւը մի ընդհանուր շրջաբերական է
հրատարակել, որով յորդորում է բոլոր
մուսուլմաններին օգնել մի այդպիսի օգ-
տակար հաստատութեան:

Կարելի է արդեօք յուսալ, որ գոնէ
այս դեպքում մահապարտութեան ազգաբնա-
կութեան առանձնաշնորհված, այն է բե-
կերի և աղաքարների դասակարգը, նախա-
ձեռնող կը հանգիստանայ և իր օրինակով
կը դրէ մահապարտութեան ժողովուրդը նպաս-
տել մի այնպիսի հիմնարկութեան իրա-
դրման, որից կախած է նրա առաջադի-
մութիւնը, մոռալա և բարոյական զարգա-
ցումը:

ապրուստի կարիքը: Ձիթնիների այն բազմա-
թիւ պլանտացիաները, որ ջնջողացիները մի
ժամանակ մշակել էին, այնքան նշանաւոր բեր-
քերի աղբիւր ներկայացան, որ հայերը իրանց
ընտանեկան երկրի անունը «Ձէյթլիում» դրին, որ
թիւրքերէն նշանակում է ձիթնի: Այս, Առա-
նայի, Տարոսի և Միսիս հայերը, բնակվելով Ձէյ-
թլիումից հարաւ, աշխարհիկ, փախան ու եկան
միացան իրանց հայրենակիցների հետ և նոր հա-
մայնքներ կազմեցին:

«Եւ մինչդեռ Ձէյթլիումի գեղերը այդպէս կաղ-
մակերպվում էին, մի նոր հայկական գաղթակա-
նութիւն, զուրս գալով Կիւրիկիայի տափարակնե-
րից (Չուխուր-Օվայ կոչված) եկաւ նոյնպէս հա-
տառվեց Տարոսի սարում, Սիւս հիւսիսային կող-
մում, մի օրվայ ճանապարհով նրանից հեռու
Այդ դիրքը ունենալով, հեշտ էր դանաղան հայ
համայնքների համար հարկաւոր եղած ժամանակ
միմեանց օգնել. այդտեղ նրանք մի գիւղ յինչեցին
Հաճին անունով, որ այժմ Խոզան-օղլու տիրապե-
տած երկրի կենտրոնն է կազմում: Վերջապէս,
Ամանոս լեռը (Սև սարը), որ բաժանում է Կա-
րամանիան Միսիսից, Կիւրիկիայի արեւելեան ա-
մեն կողմերից եկած ուրիշ հայերի ապաստարանը
դարձաւ: Նրանց հետեցին ուրիշ գաղթական-
ներ, որոնք գալիս էին այդ ընդարձակ երկրի
ամեն կողմերից և որոնց թիւը շուտով այնքան
շատացաւ, որ Ամանոս լեռան ամբողջ շարքը
բռնեցին նրանք և ամրացրին այդ սարը Տարո-
սի ու Ձէյթլիումի կիրճերի պէս: Այդ է պատճա-
ռը, որ թիւրքերը Ամանոսի սարերում ապաս-
տանած հայերի այդ դիրքին «Գեաւուր-դաղ» ա-
նունը տուին (անհաւանական սար):

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՐԿԱՆՈՐ Է ՍԿՍԵԼ

Ուսուցիչականությունը, հետևելով արևմտեան եւրոպային, վերջին տարիները մի առանձին եռամսեայ ակումբ է ժողովրդականացնել պատմական երկերի գործիչների կենսագրությունները: Ուսման շնորհիվ Պալլենկովի փոքրիկ, գեղեցիկ դպրոցները, որոնք այժմ էլ անընդհատ հրատարակվում են և արդէն հասել են այնքան մի պատկանելի թվի, որ առանձին դրագրարան են կազմում: Պալլենկովի օրինակին հետևում է Սուվորովն, որ հրատարակել է Պլուտարքոսի զբոսած կենսագրությունները, այլ և մի առանձին շարք կենսագրությունների՝ «Հարիւր մեծ մարտիկ» վերնագրի տակ: Աւելորդ է բացատրել թէ որքան մեծ կրթական նշանակություն ունեն այդ կենսագրությունները: Գործունէութեան այլ և այլ ասպարէզներում համաշխարհային անուն հանած մարդիկն են ազգերի քաղաքակրթութեան, առաջադիմութեան գլխաւոր պատճառները, հետեւաբար ամեն մի ազգ, որ ձգտում ունի զգալի առաջադիմութեան, քաղաքակրթութեան, պարտաւոր է ճանաչել այդ գործիչներին:

Այս ընդհանրապէս: Գալով հայ ժողովրդին, մենք կանխում ենք մի բացատրիկ հանգամանքի առաջ: Մեր գրականությունը մինչև այժմ շատ քիչ, շատ անշնչան բան է տուել ընդհանուր պատմությունից: Եւ հայ ընթերցողը, որ մտաւր կրթութեան նիւթ վերցնում է բացառապէս հայերէն գրքերից, չը գիտէ և չէ էլ կարող իմանալ ընդհանուր պատմութեան պատմական կենսաքի խոշոր երեւոյթները: Դա կղզիացած է, նրա հասկացողութիւնը զրտի աշխարհներէ և անցած գնացած մեծ իրողութիւնների մասին շատ սահմանափակ է: Մինչև այժմ մեր մէջ լոյս չը տեսաւ մի ամփոփ, փոքր ի շատէ մանրամասն ընդհանուր պատմություն, էլ չենք խօսում ընդհանուր գրականութեան, տնտեսական և այլ մասնագիտական պատմութիւնների մասին: Հայ ընթերցողը տեղեկութիւն չունի, թէ ինչ զբոսարարութիւնների, անգույն մաքառումների, կուրսների գնով է քաղաքակրթւած մարդկութիւնը ձեռք բերել այն բոլոր կատարելագործութիւնները, որոնցով պարծենում է այժմ: Մտքի և կուլտուրայի աստիճանաբար զարգացումը, որ կատարվել է հազարաւոր դարերի ընթացքում, ծածկված է հայ ընթերցողից: Փարէ, երկաթի, բրոնզի դարեր լսելով, նա մնում է զարմացած: Հնադրոյն կրօնները, որոնք այնքան գեղեցիկ կերպով պատկերացնում են մարդկային մտքի

«Եւ ահա այդպէս, Տարբոսի սարերում հաստատվեց մի յատուկ հայ գաղթականութիւն, որ մինչև այժմ որոշվում է իր դրացի թիւրքմէն և քրիւղ ցեղերից իր նահապետական բարք ու վարքով և պատերազմական քաջութեամբ»:

Վերեւում ասացինք, որ ամենահին դարեր յիշատակարանը, որի մէջ յիշված ենք տեսնում Չէթուն բառը, վերաբերում է 16-րդ դարի վերջին: Այդ յիշատակարանը Գրիգոր ԺԳ՝ պապին ուղղած մի վկայագիր է, գրված 1586 թվին Սպարիայ վարդապետի Սիւ կաթողիկոս ընտրվելու համար: Մի ուրիշ ձեռագիր մէջ, որ գրված է 1596 թվին, այսպէս է ասված, «Գրեցաւ գիրքս ի զէթ ուն ոյ վանքն ի սուրբ Աստուածածնի դուռն: Գրանից յետոյ արդէն յաճախ կրկնված ենք տեսնում Չէթուն անունը, սակայն իբրև քաղաքագիր և ոչ իբրև երկիր կամ գաւառ, այդ դէպքերում Ուլիա անունն է գործածվում:

Յայտնի աշխարհագիր էլիզէ Բէլլիւ ահա ինչ է ասում Չէթունի մասին, «Չէթունի վերքի աւազանի վրա գտնված գլխաւոր քաղաքը Ալբիստանն է, որի մէջ մի քանի հայ ընտանիքներ կան, բայց նրա հարաւարեւմտեան վեց փոքր համայնքներից բաղկացած մի հայկական դաշնակցութիւն (confederation haikane) կայ, որը պահպանվել է մինչև վերջին օրերս Չէթուն կամ «Չէթունի» կոչված բարձր հովիտներում, թէև ծառերը ամենին չեն բուսում 1,500 մետրից պակաս բարձր լեռնոտ տեղերում: Այդ մի եզակի երեւոյթ է հայկական աշխարհում, որը գրեթէ ամբողջովին բաղկացած է ստրկացած հայատաններից, տեսնել աղատ լեռնադաշտների մի հասարակութիւն, որը պահպանել է իր ան-

աստիճանաբար զարգացումը, աշխարհայեցողությունների բարեփոխումը, մինչև այժմ էլ միջնադարեան աստուածաբանների լեզուով կոչվում են դիական և նրանցով հետաքրքրվելը նշանակում է լինել անաստուած:

Հարկաւոր է լայն հայեացքներ մտցնել ժողովրդի մէջ, վերացնել նրա նախապաշարմունքները, տալ նրան բազմակողմանի կրթութիւն, մի և նոյն ժամանակ ինքնաձանաչութեան հասցնել նրան, գիտակցութեան պատուանդան ստեղծել նրա համար: Այդ բոլորը աւելի հեշտութեամբ կարող է գլուխ բերվել, եթէ միանգամից ընդունենք, որ համամարդկային գաղափարները պէտք է իւրացնեն, պէտք է մասնակցել ընդհանրութեան մտաւոր շարժման, ազատվելով չինական այն սղանող մեկուսութիւնից, որ թեւադրում են իւրաքանչիւր ազգի չովինիստական, քարացնող տարրերը:

Եթէ հարկաւոր է լայնարձակ մտաւոր հորիզոն, եթէ հարկաւոր է, որ ներկայի որ և է երեւոյթը ընդանակ հայեացքով կշռելու կարողութիւնը արված լինի, պէտք է, ուրեմն, ընթերցող հասարակութիւնը հաղորդակից անել ընդհանուր ազգերի պատմական և ներկայ կեանքին: Իսկ այդ կարելի է անել այն կենսագրությունների միջոցով, որոնք լուսաբանում են այդ կեանքի յայտնի էպոխները: Բազմաթիւ մեծ ընթերցանաւոր էր, որ փրկեց իր աշխարհը բրահմի նախնութեան քարացնող, անբարոյական լուծից: Դա բարոյաց սէր, արդարութիւն, զինվեց այն անթիւ ծէսերի դէմ, որոնցով կաշկանդված էին մարդկի իրանց անձը և հոգին մաքուր պահելու համար: Կաթոլիկ եկեղեցու բռնապետութիւնը նուիրագործելու համար լոյս եկաւ մի լոյսաւոր կարողացաւ վերահղել արդարութիւնը իբր հիմնաբար ընդունող մի եկեղեցի պաշտպանելու նպատակով նուիրագործել, կազմակերպել ամեն տեսակ անարդար և անազնի միջոցներ, որոնցով ամբողջ դարեր տանջեց մարդկութիւնը: Այդպէս էր և Տօրկվեմազա, ինկվիզիցիայի հանձնարը Միթէ դրանց պատմութիւնները մեզ հարկաւոր չեն: Կամ միթէ այնպիսի նահատակներ, ինչպէս Հուս, Գալիլէյ, Զորբանո Յրուսի պակաս բան կատէին մեր սրբին ու հոգուն:

Պարէ, որ կենսագրությունները մեզ համար անհամեմատ կարեւոր նշանակութիւն ունեն, քան նոյն իսկ ուսու հասարակութեան համար, որովհետեւ մեր մէջ չը կան ընդհանուր պատմութեան վերաբերեալ ձեռնարկներ, ուսումնասիրութիւններ:

Այժմ հարց է, թէ ո՞վ պիտի կարողանայ լրացնել այդ մեծ պակասութիւնը: Անհատական ինիցիատիվի վրա յոյս դնել չենք կարող, հար-

կախութիւնը դարերի ընթացքում Թուով մօտ 10,000 և կատարելապէս վարժված գէյքի գործածութեան մէջ, այդ հայկեանները (Haikanes) պատապարել են իրանց երկիրը կիրճերում շինված մի քանի ամրութիւններով և առաջ թող չէին տալիս ոչ մի մասնատականի մանկ իրանց երկիրը, նրանք Ալբիստանի փաշային ուրիշ հարկ չէին վճարում, բայց դաշտային մասերում իրանց մշակած հողերի վարձը»:

Այս բոլոր տեղեկութիւններն հիման վրա, մենք կարող ենք մի ընդհանուր եզրակացութիւն անել Չէթունի ծագման և նրա պատմութեան մասին: Դիւր է, ինչպէս նկատում է Լանդուան, այդ երկրի հայերի պատմութիւնը այնքան մութ կէտեր է պարուստեցում, որ անկարելի է նրա զոմանգան շրջանները ներկայացնել ամենայն ճշգրտութեամբ, բայց յամենայն դէպս այս կարող ենք հաստատել, որ Լուսիեան թագաւորութեան կործանումից յետոյ Կիլիկիայի հայ ժողովրդի մի մասը՝ ապաստանելով Տարբոսի և Ամանուս կամ Սև սարերի անտառիկ բարձրութիւնների վրա, հաստատեց այդտեղ հանրապետութեան նման մի կառավարութիւն և պահպանեց իր անկախութիւնը, շարունակ կուր մղելով դաշտային թիւրքմէնների, թիւրքերի և քրիւղերի դէմ և միայն երբեմն վճարելով հարկ օսմանեան կառավարութեան կամ թիւրքմէն զօրաւոր ցեղերից մէկին:

Ներկայ դարի սկզբում ահա թէ ինչ դրութեան մէջ էր այդ երկիրը: Տարբոսի և Ամանուս լեռներում բաղմաթիւ հայ և մի քանի թիւրքմէն համայնքներից բաղկացած մի դաշնակցութիւն, որ կոչվում է Ուլիա և որի նշանաւոր անդամները կազմում են Չէթուն գիւղաքաղաքը, Հաճին քաղաքը, Ֆրոնուլ և բազմաթիւ ուրիշ գիւղեր ու

կաւոր են ոչ միայն դրամական միջոցներ, հարկաւոր է գլխաւորապէս ձեռնհաս դրական ոչ-ժերի մի հաւաքական գործունէութիւն, որովհետեւ հաւաքել, խմբադրել, մի յայտնի ծառայող կենսագրութիւններին, յարմարեցնել հայ ընթերցողի մտաւոր կարողութեան՝ սրանք անհրաժեշտ պայմաններ են գործի աջողութեան համար: Դնենք թէ այդպիսի մի ձեռնհաս մարմին ուղում է տալ Զրադաշտի կենսագրութիւնը: Դա չէր բաւականապէս բաւարար, չոր թարգմանութեամբ, այլ նկատի կունենար որ մաղդեղական կրօնը անազնի դեր է կատարել մեր պատմութեան մէջ, կառավարչութեան ժամանակ ծառայելով հայերին իբրև հաւատալիք, իսկ քրիստոնէութեան ժամանակ դարաւոր անհղ պատերազմներ մղելով գերիշխանութեան համար: Նըկատի կունենար մասնաւոր այն հանգամանքը, որ հայը զարթոյում էին պարսիկներին ճանաչում է միայն իբրև «անօրէն», «խաթաղութ», «մոխրապաշտ» պարսիկ, իսկ թէ ինչ էր նրա դաւաճած կրօնի էությունը, ինչ բարոյական հայեացքներ տէր էր նա, ինչ սկզբունքներով էր ղեկավարվում իբրև քաղաքական մի խոշոր մարմին, այդ մասին հասկացողութիւն, ի հարկէ, չը կայ: Ուստի աւելի կը պարզաբանէր «Չէթունի» աւելի լրիւ կատար տեղեկութիւններ կը մտցնէր, օգտվելով նոյն իսկ հայկական աղբիւրներից (Նընիկ, Նըլիշ), աղբիւրներ, որոնք շատ գնահատելի նիւթեր են պարունակում այն կերպարանափոխութեան մասին, որին նիւթարկված ենք տեսնում մաղդեղականութիւնը Աստանեան հարստութեան ժամանակ:

Ընդունելով խմբագրական մարմնի անհրաժեշտութիւնը, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ այդպիսի մի հաստատ, անողական և պատասխանատու գործը կարող է գլուխ բերել միմիայն մեր Հրատարակչական ընկերութիւնը, իբրև լմի հաստատութիւն, որ այժմ հայերի մէջ հրատարակչական գործի միակ տէրն է: Եւ նրան է մնում յանձն առնել ինիցիատիվը:

Մենք ցաւում ենք, որ Հրատարակչական ընկերութիւնը մինչև այժմ, առհասարակ, շատ քիչ է կարողացել սեփական ինիցիատիվով գործել: Դա, ճիշդ է, վերջին տարիներս մի շարք որոշումներ է արել գրական այլ և այլ ճիւղերին վերաբերեալ հրատարակութիւնների մասին, նոյն իսկ հրաւէր է կարողացել մի քանի կենսագրութիւններ կազմելու: Բայց բարի մտքերը դեռ բաւական չեն: Մեր մէջ եղած գրական ոյժերը հազիւ թէ ձեռնհաս լինեն ինքնաբերաբար, մենակ, առանց խմբագրական մարմնի ցուցմունքների ու ծրագրի, պատրաստել կենսագրութիւնների մի այնպիսի շարք, որ ունենար աւաններ: Այդ դաշնակցութիւնը կազմող լեռնադաշտների թիւը հասնում է 30—35,000-ի: Դաշնակցութեան կառավարութիւնը ժողովրդի կողմից, ամենահին ժամանակներից, յանձնված է բուն Չէթուն քաղաքի մէջ՝ նստող չորս իշխանների, որոնք ժառանգաբար վարում են իշխանութիւնը և միւս տեղերում՝ նշանաւոր անձերի միջից ընտրված քեհաններին: Չէթուն քաղաքին վերաբերեալ գործերը վարում են իշխանները, իսկ դաշնակցութեան վերաբերեալ գործերը՝ դաշնակցական խորհուրդը, որ կազմվում է իշխաններից և քեհաններից: Այդ խորհուրդի նախագահը Չէթունի կամ Ուլիայի թիւնի առաջնորդն է, որ նստում է ս. Աստուածածնի վանքում: Խորհրդի պաշտօնն է՝ դատաւոր լինել, դաշնակցութեան մէջ ծագած երկպառակութիւններին վերջ տալ, հաւաքել գլխահարկը, որի մի մասը գործ են ածում եկեղեցիներին, վանքերին շինութեան և դաշնակցութեան պէտքերի վրա, իսկ մի մասով վճարում են պետական հարկը Մարասիմի նստած փաշային: Օսմանեան պետութեան արվող այդ հարկը, սակայն, կամաւոր է նրա քանակութիւնը 60,000 դրուշ է, որը սակայն վճարվում էր, երբ կամենում էին կամ հարկաւոր էին համարում: Գլխահարկից մի մաս էլ վճարում էին Սիւ կաթողիկոսին և Չէթունի առաջնորդին:

Դաշնակցական խորհուրդը բոլոր հարցերը վճռում էր ձայներով առաւելութեամբ, հաւատարմութեան դէպքում նախադրահի ձայնը վճռում էր խորհրդը: Զորս իշխաններից ամեն մէկին յանձնված էր Չէթուն քաղաքի 4 թաղերից մէկը, որտեղ նա համարվում էր գլխաւոր դատաւոր, իսկ դիւղերի դատաւորները քեհաններն էին, և որովհետեւ

մի ընդհանուր ուղղութիւն, մի ոգի, մի չափ ու ձև: Ընկերութիւնը պատահական աջողութեան է աջը դնում, մինչև այժմ սպասում է, թէ ով կը պատրաստէ և կը ներկայացնէ իր կամեցած կենսագրութիւններից մէկը: Կարող է, ի հարկէ, պատահել, որ մէկը կամ երկուսը կը ներկայացնեն, կարող է պատահել, որ վատ կը լինի կազմված գիրքը, և այն ժամանակ ընկերութիւնը պիտի չընդունէ նրան, պիտի յետ դարձնէ և սպասէ, թէ երբ մի ուրիշը կը փորձէ կատարել նոյն գործը աւելի լաւ կերպով: Պատահական հանգամանքների վրա չէ կարելի մի լուրջ գործ հիմնել: Պէտք է, ուրեմն, ուրիշ կազմակերպութիւն, պէտք է մի մնայուն մարմին, որ սկսէ և առաջ տանէ այդ գործը սեփական միջոցներով, սեփական աշխատութեամբ:

Ուրիշ միջոց չը կայ: Ընկերութիւնը այդ պիտի հասկանայ և իր կողմից ջանք չը պիտի խնայէ այդ խոշոր և օգտաւետ գործը հաստատ հիմքի վրա դնելու համար:

1.

Մի ՊՈԼԵՄԻԿՍԻ ԱՌԻԹՈՎ

Երեք և կէս ամիս սրանից առաջ, մի պարոն, Մամէդ աղա Շախտախտինսկի անունով, ղեկավար «Тифлисский Листок» լրագրում յօդուածներ, որոնց մէջ յայտնում էր, որ Անդրկովկասեան բէգերին, աղաւթներին և մէլիքներին վերապահված է կուլտուրական մեծ դեր Անդրկովկասում: Շախտախտինսկու հայեացքների դէմ մենք գրեցինք մի նկատողութիւն՝ «Կուլտուրայի պատրակ» վերնագրով, որ տպագրվեց «Մշակի» № 102-ի մէջ:

Այժմ պ. Շախտախտինսկի նորից գրել է մի յօդուած («Тифлисский Листок» № 285 և 286), որով կանխում է պատասխանել ոչ միայն «Մշակին», այլ և «Каспий» լրագրին, որ նոյնպէս գրել է յիշեալ յօդուածի դէմ: Ինչ վերաբերում է «Каспий» լրագրին, նա ինքը կարող է իր ասածները պաշտպանել: Մենք կը խօսենք միայն մեր կողմից:

Նախ և առաջ մի նկատողութիւն պ. Շախտախտինսկու գրելու եղանակի մասին: Դա գործ է ածում վիճելու և հերքելու մի ձև, որ յատուկ է միայն ստոր մամուլին: Դա վերաբրում է մեզ խօսքեր, որ մենք չենք ստել և մեր հայեացքի մէջ նա չէ ուղում տեսնել հանողմունք, այլ թշնամութիւն դէպի թուրք տարրը: Այդ տեսակ գրողներին պատասխանում են միայն արհամարհանքով, և մենք միւս անգամ մեզ ազատ կը համարենք պատասխանելու պարտաւորութիւնից, եթէ մեզ հետ վիճողը թոյլ կը

ամեն գիւղի քեհանն ընտրվում էր նրա նշանաւոր ընտելիների միջից, ուստի հայաբնակ գիւղերի քեհանները հայ էին լինում, իսկ իսլամաբնակ գիւղերինը—իսլամ: Այդ պատճառով էլ դաշնակցութեան նախադրահ Չէթունի արքայիսկիպոսը չէր խառնվում դաշնակցութեան ներքին քաղաքացիական գործերի մէջ:

Ամեն անգամ, երբ դաշնակցութեանը մի որ և է վտանգ էր սպառնում, դաշտաբնակ երկրորդ թիւրքմէններին, քրիւղերին կամ թիւրքերի կողմից, դաշնակցութեան իշխանները և քեհանները հաւաքում էին իրանց ձեռքի տակ եղած և դէպք կրելու ընդունել քնակիչներին: Այդպիսով կազմվում էր 7—8000 հոգուց բաղկացած մի զօրք: Դաշնակցութեան անգամ հայերը և թիւրքմէնները մի և նոյն դրօշակին էին հետևում և հաւատարմ եռանդով կուում էին իրանց ազատ երկրի պաշտպանութեան համար:

Ահա այդպէս էր դաշնակցութեան կազմակերպութիւնը դարձնում սկզբին: Բնական է, որ այդպիսի կազմակերպութեամբ, մասնաւոր երկրի ղեկը չորսունով ղեկընդնորդելու յաճախ պարզում էին ապստամբութեան դրօշակը օսմանեան կառավարութեան դէմ, մասնաւոր որ կառավարութիւնը de facto չէր կարողացել նուաճել այդ երկիրը և զպել, նոյն իսկ դաշտային թիւրքմէն ցեղերը զլանում էին վճարել որոշեալ 60,000 դրուշ հարկը:

Ներկայ 19-րդ դարում տեղի են ունեցել այդ տեսակ ապստամբութիւններ 4 անգամ—1819 թվին, 1861—62 թվին, 1872-ին և այժմեանը, որ դեռ այս րօպէս էլ շարունակվում է:

(Կը շարունակվի)

տայ իրան աղաւաղել մեր մտքերը և ծուռ ու մուռ ճանապարհներով մօտենալ խնդրի քննութեան:

Պ. Շախտախոնիկին ասում է. «Մշակը» այնպիսի է, որ բարձր դասակարգը, իբրև կատար, մշտականորէն տարր է պետութեան մէջ: Մի ուրիշ տեղ նա ասում է, որ «Մշակը» (և «Качество») ձայն է բարձրացրել զրկելու մասնական բարձր դասակարգերը այն կառավարական և դատակարգալին իրաւունքներից, որոնցով նրանք այժմ օգտւում են:

Մենք այդպիսի միտք «Մշակի» մէջ չենք յայտնել: Մենք ասել ենք, «Թող բեզերը ինչպէս կամենում են ապահովել իրանց կառավարչների արդիւնքները, ինչպէս կարող են վախեն իրանց նիստ ու կացը, բայց թող չեղարկեն առանձին արտօնութիւններ և բացառիկ իրաւունքներ ձեռք բերել՝ յանուն ժողովրդի կըրթում թե ան և առաջագիւտութեան:

Մենք պնդում ենք, որ բեզերի և միլիոնների արտօնութիւնները կարող են ընդունվել իբրև արտօնութիւններ, իբրև նրանց պատկանած իրաւունքներ, բայց չը պէտք է սրբազորութիւն կոչելու և արքայի անունով, կըրթ ալ ան մի ստիպել անտուով, առաջագիւտութեան ֆախտօրի կոչումով:

Մենք չարունակում ենք կարծել, որ մեր ժողովուրդը ամենին կարօտ չէ իր առաջագիւտութեան և կրթութեան համար բեզերի արտօնութիւններին, որոնցից ոչ միայն չի ստանայ որ և է օգուտ, այլ և կարող է զգալի կերպով վնասուիլ:

Այդ միտքը յայտնում էինք խօսելով առհասարակ բեզերի մասին, ինչն նրան թուրք, հայ, լեզգի, քրդեր թէ մի ուրիշ ազգութիւն: Եթէ միայն անգամ մենք խօսած լինէինք միայն թուրքերի մասին, և այն միտքը յայտնէինք, թէ թուրք ամբողջ առաջագիւտութեան հարցը չը պէտք է պօշտել բեզերի արտօնութիւններով, դրանում ինչ թշնամութիւն կայ դէպի թուրք տարրը: Միթէ Շախտախոնիկին այնտեղ է հասել, որ թուրք ասելով հասկանում է ոչ թէ միլիոնաւոր թուրք ամբողջ, այլ մի քանի հարիւր արտօնութիւններին:

Մենք ամենին չենք չօչախել կառավարատէր դասակարգի օգտաւէտութեան կամ վնասակարութեան հիմնական խնդրը առհասարակ պետութեան մէջ: Նրա դերը պատմութեան մէջ, եւրօպական երկիրներում: Իսկ մի շատ մեծ և կենսոտ խնդիր է, որի մասին մեր կարծիքը կը յայտնենք մի ուրիշ ժամանակ: Առաջում այստեղ կ'ստենք, որ մենք խօսել ենք միայն մեր բեզերի և միլիոնների մասին, և աքի առաջ ենք ունեցել մեր հանգամանքները:

Պ. Շախտախոնիկին մի քանի անգամ կըրկնում է, որ նա բեզերի արտօնութիւնները պաշտպանում է յանուն ընդհանուր պետական շահերի: Մենք կարող ենք հաւատացնել պարտնին, որ մենք էլ մեր բողոքը կուշտութեան պատրուակի դէմ հիմնել ենք և հիմնում ենք պետական շահերի վրա և կարող ենք ասել, որ մեր հայեացքին պաշտպան են ոչ միայն լուրջ գիտնականներ, այլ և պետական գործողներ, որոնք կասկածով են վերաբերվում նոյն իսկ աւելի արժանաւոր արտօնութիւններին, քան մեր երկրի անպարտաւոր, նոյն իսկ երբեմն եւրօպայի ստուերից խորշով արտօնութիւններին:

Մենք մեր յօդուածի մէջ հարցնում էինք, միթէ որ և է մէկը խանգարում էր մինչև այժմ բեզերին և միլիոններին կատարելու իրանց պատմական, քաղաքակրթական դերը:

Միթէ չը գիտենք ամենքս, որ թէ հայ ժողովուրդը և թէ նոյն իսկ թուրք ազգաբնակչութիւնը կազմել են իրանց ինտելիգենցիան ժողովրդի բոլոր դասակարգերից, որոնց մէջ բեզերը և մեկնները փոքրամասնութիւն են:

Միթէ Բազուի ոչ-բեզական ծագումից սերված թուրք հարուստները և թուրք կրթութիւնները ապացոյց չեն, որ թուրքերի առաջագիւտութեան մասին մտածելու համար ամենին հարկաւորութիւն չը կայ արտօնութեան դասակարգին պատկանած լինել: Մեր գիմնադրանքում և գիւղական զարգացման սովորող թուրք ուսանողները պատկանում են մեծ մասամբ ոչ-բեզական դասակարգին: Իսկ դրանք ապագայ կուշտութեան գործողներին գնդի զինուորներն են:

Մենք կարող էինք պ. Շախտախոնիկին ասել և շատ ուրիշ բան, առաջ բերել մահմադա-

կան իրաւաբանական հայեացքը հողատիրութեան և սեփականութեան վրա, վկայութիւններ բերել նոյն Բընանից, որին նա զինակից է վերցնում իր համար, շատ վիճակագրական և պատմական հետազոտութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ կառավարական կազմակերպութիւնը ամենուրեք չէ ունեցել այն ընդհանուր բարերար հետեւանքները, որոնց վրա պնդում է պ. Շախտախոնիկին: Բայց այդ բոլորը մեզ շատ հեռու կը տանէր: Մենք ցատում ենք, որ յօդուածագիրը այնպէս թեթեւ է վերաբերվում դէպի պատմութիւնը և գիտութիւնը, և կարծում է թէ վայրէ վերջ անխորհրդակցութեան կարելի է մի գրութիւն հեղքել կամ ազգայնացանել: Առ այժմ այդքան:

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ԱԶՆՈՒՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐԸ

Մայրաքաղաքների մի քանի լրագիրներին, ինչպէս «Новое Время», «Московскія Вѣдомостя», վերջին ժամանակներում արած յարձակումները և ինսինուացիաները կովկասի ազգաբնակչութեան, զլխաւորապէս վրացի և հայ տարրերի դէմ, առիթ են տուել վրաց ազնուականութեան հարց բարձրացնել, թէ արդե՞ք հարկաւոր չէ ճշմարտութիւնը վերականգնել և զրաւարտութիւնները մերկացնել:

Այդ նպատակով դեկտեմբերի 17-ին կայացած վրաց ազնուականութեան արտակարգ ընդհանուր ժողովում, իշխան Գուրամով ղեկնց ազնուականութեան պարագլուխ իշխան Բաղդասար-Մուխրանսկին մի ճառով, որի բովանդակութեան հետ հարկաւոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին:

Պատմութիւն ուստաց մամուլի մի քանի օրգանների վրայ ազնուականութեան դէմ ուղղած անվայել յարձակողական յօդուածների մասին, Գուրամով ուղարկութիւնը դարձրեց այն հանգամանքի վրա, որ այդ յօդուածները, տպված լինելով շատ տարածված լրագիրներին մէջ, մեր ընդարձակ հայրենիքի բոլոր անկիւններում կարող են սփռել թշնամութեան սերմեր դէպի վրացիները: «Ես, ասաց ճառախօսը, միտք էլ չունենմ դատաւարաւորութեանը դէպի մեզ ունեցած ընդհարանական վերաբերմունքի համար (ընդհանրապէս, որքան աւելի խիստ մերկացնվին մեր հասարակական վերքերը, այնքան հնորակալ պէտք է լինել մամուլի գործիչներին): Բայց այլ բան է չիտակ, անաչառ, ճշմարտութեան վրա հիմնված կրթական, այլ բան է դիտմամբ յօրինած փաստերի կուտակումը, նրանց լուսաբանութիւնը ահնդեցիկ կերպով և իբրև զրա հետեւանք—լով ինսինուացիա, դա կրթական չէ, այլ կանխամտածած գիտաւորութիւն: Դժբախտաբար, այդպէս են իրանց բնաւորութեամբ այն ֆիլիսոփայները, որոնք ուղղված են մեր հասցէին: Նրանք հաւատարմացնում են, թէ իբր մենք՝ վրացիներս, այստեղ (կովկասում) գրաւել ենք բոլոր պետական պաշտօնները, թէ իբր մենք հանդիսանում ենք ուսական տարրի սիստեմատիկան հակառակորդ, իբր մենք երկրի մէջ ուստ նախաձեռնութեան դադարացման արգելք ենք լինում, և այլն: Այդ հիման վրա, նրանք առանց քաջկեղու առաջարկում են դուրս բերել մեզ, իբրև անվտանգի տարր, ծառայութիւնից և գուցէ այն երկրից, որի մէջ, Աստուծու կամքով, մենք ապրում ենք մի քանի հազար տարիներից ի վեր:»

Ճառախօսը հարկ չէ տեսնում ազգայնացիներ բերելու այդ ամբաստանութիւնների դէմ: Նրանք միայն զրաւարտութիւններ են և դրա ապացոյց վրաստանի ամբողջ պատմութիւնն է, այն բաղմաթիւ պատերազմները, որոնց մէջ վրացիները իրանց զոհել են ուսանելի հետ միասին՝ ձգտելով մի և նոյն նպատակին—ընդհանուր հայրենիքի փառքի և գոյութեան: Այդ բոլոր ինսինուացիաներին և դրաւարտութիւններին վերջ դնելու համար, ճառախօսը անհրաժեշտ է համարում միջնորդել և խնդրել, որ սենատորական ընդհանրութիւն նշանակվի, որի վճիռը մի անգամ ընդ միշտ կը փակի զրաւարտութիւնը բերանը:

